

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԵՎ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն և Ուկրաինայի պետական մաքսային ծառայությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

կատարելով «Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Ուկրաինայի պետական մաքսային ծառայության միջև մաքսային վիճակագրական տեղեկատվության փոխանակման հարցերով համագործակցության կարգի մասին» 2009 թվականի հոկտեմբերի 16-ին ք. Երևանում ստորագրված արձանագրության 3-րդ հոդվածի դրույթները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ որոշում է այն ապրանքային դիրքերի ցանկը, որոնք վերաբերում են ռիսկային խմբերին կամ որոնց վերաբերյալ մաքսային վիճակագրության տվյալներում կան անհամապատասխանություններ և որոնց համար անհրաժեշտ է տեղեկատվության մանրամասն փոխանակում, ապա գրավոր տեղեկացնում է դրա մասին մյուս Պայմանավորվող կողմին:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի փոփոխել կամ լրացնել սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքային դիրքերի ցանկը՝ դրա մասին գրավոր ծանուցելով մյուս Պայմանավորվող կողմին առավելագույնը մինչև հաջորդ ամսվա 10-րդ օրը:

Հոդված 2

1. Տեղեկատվությունը կազմում է յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայն սույն Արձանագրության 1-ին հավելվածի համաձայնեցված ձևաչափով (այսուհետ՝ տեղեկատվություն) և ամեն ամիս փոխանցում է մյուս Պայմանավորվող կողմին հաջորդ ամսվա 22-րդ օրն իրենց երկրների օրենսդրությամբ նման կարգի տեղեկատվության համար սահմանված եղանակով:

2. Պայմանավորվող կողմերը փոխանցում են միմյանց դասակարգիչներ և այլ տեղեկատվական տվյալներ, որոնք օգտագործվում են տեղեկատվության կազմման ժամանակ:

Հոդված 3

1. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են օգտագործել սույն Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն ստացված տեղեկատվությունը բացառապես մաքսային նպատակների համար: Այն կարող է փոխանցվել կամ օգտագործվել այլ նպատակների համար միայն այդ տեղեկատվությունը փոխանցած Պայմանավորվող կողմի գրավոր համաձայնությամբ:

2. Փոխանցված տեղեկատվությունը ստացած Պայմանավորվող կողմը դրա համար ապահովում է գաղտնիության նույն պայմանակարգը, որը գործում է իր պետությունում նման բնույթի սեփական տեղեկատվության և դրա պահպանման համար՝ համաձայն ազգային օրենսդրության:

3. Այն տեղեկությունները, որոնք Պայմանավորվող կողմերի երկրների օրենսդրության համաձայն կապված են պետական գաղտնիքի հետ, սույն Արձանագրության շրջանակներում չեն փոխանցվում:

Հոդված 4

Սույն Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն տվյալների փոխանցման կազմակերպչական-մեթոդական և տեխնիկական պայմանները համաձայնեցնում են Պայմանավորվող կողմերը լիազորված անձանց միջոցով, որոնց ցանկը բերված է սույն Արձանագրության 2-րդ հավելվածում:

Հոդված 5

1. Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Արձանագրությունում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն դրա անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով և ուժի մեջ կմտնեն սույն Արձանագրության 8-րդ հոդվածով նախատեսված կարգով:

2. Սույն Արձանագրության հավելվածները դրա անբաժանելի մասն են: Պայմանավորվող կողմերը հնարավորին կարճ ժամկետում գրավոր տեղեկացնում են միմյանց սույն Արձանագրության հավելվածներում կատարված փոփոխությունների և լրացումների մասին առանց առանձին արձանագրությունների կազմելու անհրաժեշտության:

Հոդված 6

Սույն Արձանագրության շրջանակներում նամակագրությունը կատարվում է Պայմանավորվող կողմերի պաշտոնական լեզվով, ռուսերենով կամ ցանկացած այլ ընդունելի լեզվով:

Հոդված 7

Սույն Արձանագրության դրույթների իրագործման և մեկնաբանման հետ կապված վեճերը և տարաձայնությունները կկարգավորվեն Պայմանավորվող կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 8

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին հայկական կողմի գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ուկրաինական կողմից ստանալու օրվանից և կնքվում է անորոշ ժամկետով: Արձանագրությունը դադարեցնում է գործողությունը, երբ Պայմանավորվող կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով գրավոր տեղեկացնի մյուս Պայմանավորվող կողմին այն դադարեցնելու իր մտադրության մասին: Սույն Արձանագրությունը դադարեցնում է գործողությունը մյուս Պայմանավորվող կողմից համապատասխան ծանուցումը ստանալուց 30 օր հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2010 թվականի հոկտեմբերի 27-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Արձանագրության դրույթների մեկնաբանության ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում առավելություն ունի ռուսերեն տեքստը:

**Հայաստանի Հանրապետության
Կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի կողմից՝**

**Ուկրաինայի պետական մաքսային
ծառայության կողմից՝**

Հավելված 1

Ներմուծում / Արտահանում

Ներմուծում/Արտահանում

Տեղեկատվություն տրանսպորտային միջոցների մասին

Հավելված 2

Ց ու ց ա կ

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Ուկրաինայի պետական մաքսային ծառայության անձանց, որոնք լիազորված են իրականացնելու ուղիղ շփումներ

**Հայաստանի Հանրապետության
Կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե**

**Ուկրաինայի պետական մաքսային
ծառայություն**

Միրզոյան Գառնիկ Հայկի

**Օվդիենկո Նատալյա Տրոֆիմի
Մաքսային վիճակագրության բաժնի
սնօրեն**

**Մաքսային վիճակագրության,
վերլուծության և ռիսկերի**

կառավարման վարչության պետ

Մաթևոսյան Վարդան Գալուստի

Մաքսային վիճակագրության,
վերլուծության և տեղեկատվության
բաժնի պետ

Բոլդիշև Գլեբ Անատոլիի
Վիճակագրական համադրությունների
իրականացման բաժնի պետ

Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2011թ. փետրվարի 9-ին